

որ այդ կետից նայել ստիպողական ծաղկահատութեան։ Ենչ և իցէ մշտական կանոնաւոր կազմակերպված վիճակագրական դիտողութիւններ, ծաղկահատման ազդեցութեան և ծաղկի համաձարակմունքի ընթացքին վերաբերմամբ, ոչ թէ միայն աւելորդ պէտքէ համարել, այլ ընդհակառակն անշուշտ գործադրելի։ Բացի գորանից հարկաւոր է աշխատել փոխել լիմֆան, եթէ կարելի լինի, աւելի հաստատ և խսկական, բայց անվեաս նիւթով։

Կրկնածաղկահատութիւնը (ревакциնացիա) հարկաւոր է շատ վաղ չկատարել, երբեմն նա առանց հետեւանքի է մնում, և վերջը դժուար է որոշել, թէ որին պէտքէ պատուաստած համարել և որին ոչ, կարծես քսաներորդ տարին կրկնածաղկահատութիւնը յարմար է։ Համաձարակման մօտենալու ժամանակ պէտքէ աշխատել կրկնածաղկահատել բոլոր գեռահասներին, մօտաւորապէս 10 տարեկանից սկսած։ Վերջապէս հարկաւոր է աւելացնել, որ լաւ կլիներ միմիայն բժիշկները կտրէին ծաղիկը, որոնք կարող են աւելի կատարելութեամբ գործել, բայց ափսոս որ բժիշկները սակաւաթիւ լինելով, այժմ գժուար է գորա մասին մտածել։ Աւստի պէտքէ առժամանակ այդ գործը յանձնել բացի բժիշկներից, վիրակապներին և դպյեակներին, որոնց ի հարկէ պէտքէ առաջուց մանրամասնարար ծանօթացնել ծաղկահատութեան սկզբունքի և նշանակութեան հետ, և վերջապէս նոցա գործունեութիւնը բժիշկները պէտքէ աշխատեն որքան կարելի և վերադիտել։

Դ. Տ. Գ.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Երգեցողութիւնն ամեն ժամանակ, ամեն տեղ և ամեն ժողովրդի մէջ առանձին նշանակութիւն ունեցած է։ Սորա մասին շատ և շատ անգամ զրված է։ Երգեցողութիւնը և երաժշտութիւնը մէծ, զօրաւոր և օգտաւէտ արհեստ է և այնքան խորհրդաւոր և վսեմ, որ ընդհանուր կարծիքը Աստուծու մօտ ընակող հոգիներին երգող և երաժշտող կանուանէ։

Բացի ի բնէ չար մարդիկներից, որոնք երգ և երաժշտութիւն չեն սիրում երգը ամենքի վերայ մէծ ազդեցութիւն և ոյժ ունի, մինչև անգամ անբան կենդանիներն, գաղաններն ևս ոչ միայն կոկորդն երաժշտութիւն, այլ և նորա սաստիկ տպաւորութեանը կենթարկվին։

Սուրբ զերքը կվայէ, որ առաջին հնարած արհեստն երգ և երաժշտութիւնն է։ Դաւիթ մարգարէն իւր սաղմոսները երգելով կնուազէր։ Երգը կրօնի զօրաւոր գործիք էր միշտ և կհամարվի այժմ ևս, որովհետեւ մարդի սիրտն առ Աստուած կրարձացնէ։ Հին օրէնքի տաճարի մէջ 4000 երաժիշտներ և երգիչներ կային, որոնք սաղմոսերգութիւնը ժողովրդին կվայե-

Եցնէին, Մի կրօն տեսնված չէ, որի մէջ երգ մտած չլինի իրրեւ ամենազրաւող մասն, որովհետև ներդաշնակ երգը կողերք և կհոգիացնէ մարդին, երգը և երաժշտութիւնը մարդիս օրօրօցից կսկսեն նորա թշուառութիւններ ամոքել և մինչև վերջին վայրկեաններ, մինչև գերեզմանի սրտակոտոր տեսարան դիւրացնելու միջոց կլինին, Պատմութեան տեղեակ անձներ զիտեն թէ գեղեցիկ Յունաստանի մէջ երգն ի՞նչ նշանակութիւն և ազգեցութիւն ունէր, որ մասսամբ կտեսնվի Ողիսականի մէջ Ողիսւսի և Սիրէն զիցուհիների մէջ պատահած արկածից, նոյնպէս և Տէլէմաքի մէջ։ Աւելի զգալի է Խտալիայում պատահած անցքը, որ մի աւազակ իւր զայրոյթին ենթարկված անձին թոյլ տալով վերջին աղօթք մատուցանել և լսելով նորա Մազոննայի երգը բոլորովին ակամայ կարձակէ նորան առանց վեանելու, Յայտնի է նոյնպէս սրիորդի մի պատմութիւնը, որ եկած էր անդունդի մէջ զլորվելու, բայց լսելով հեռուից եկեղեցական երգը, յետ կանգնեց իւր վտանգաւոր մոքից, Եւ շատ այսպիսի դէպքեր։

Երգը շատ զօրաւոր գործիք էր միշտ և է բարբը կրթելու և մանաւանդ հայրենիքի սէրը վառ պահելու համար։ Եկեղեցին երկինք կներկայանայ երկրիս վերայ իւր կանոնաւոր քաղցրահնչիւն օրհներգութեամբ։ Մինչև անգամ՝ անհաւատ, անկրօն անձն տրամադրութիւն կստանայ երկրից վեր համբառնալ սրտով, մաքով և զգացմամբ, պատահելով այնպիսի եկեղեցու մէջ, որտեղ բնական ձայնը շքեղացրած է ներդաշնակ նուագածութեամբ։ Անհաւատն անգամ տրամադրութիւն կստանայ այդպիսի միջոցում մտածելու թէ որբան գարշելի արարած է ինքն ոչ միայն Աստուծու և մարդիկների, այլև նոյն ինքն իւր առաջ, երբ կզգայ թէ երկնիքի հետ կապօղ վսեմ զգացմունքը մեռած են նորա մէջ։

Եթէ մարդիս միտքը երկնիքի հետ կապօղն առաւելապէս մաքուր բանն քարոզն է, հապա զգացմունքը վառօղն ներդաշնակ քաղցր երգեցողութիւնն է, Եկեղեցու մէջ երկու բան կայ մարդի միտքը և սիրտը վառելու և Աստուածպաշտութիւնը վայելեցնելու։ Քարոզը և երգեցողութիւնը Աւաղ որ առաջինն չէ յաջողում դեռ ևս, որբան և կփափագէ Աւհափառ Կաթողիկոսն, պատուիրելով ամենայն տեղ քարոզներ ասելու. գուցէ սակաւ գտնվեցան միտք և սիրտ զրաւող քարոզիչներ, Քաջայշյ Ենք, որ Վեհ։ Հայրապետի հիմնարկած Ճեմարանը, իմաստուն ուղղութեամբ և նպատակայարմար կարգով, այս մեծ գործն ևս պիտի կարողանայ կատարել ազգի համար իւր աշակերտներով, Տեսոն յաջողութեամբ։

Հայերը կրօնական ազգ կհամարվին և եկեղեցու մէջ ունեցել են իւրեանց կենդանութիւն, և Հայաստանի պատմութիւնը, մանաւանդ քաղաքական կեանքի անկումից յետոյ, կարելի է ասել, մեծ մասամբ Հայաստանի եկեղեցու և Հայրապետութեան պատմութիւնն է։ Եկեղեցին, բացի կրօնի և Աստուածպաշտութեան սրբավայր լինելուց, հայրենիք եղած է մանաւանդ այնուհետև Հայերի համար, Հայրենիք սիրել, հայրենիքի փառքին ծառայել, հայրենիք բարեղարդել, բարեկարգել, որով ամենքի

համար առաւել ցանկալի, վայելչական, և թանկագին կացուցանել այդ հոգեոր հայրենիքը, իւրաքանչիւր Հայի նուիրական պարտք է, Ուրեմն որքան առաւել երախտազիտութեան արժանի է եկեղեցու զլուխը, որ իւր կեանքը կնուիրէ այս վսեմ նպատակին. Մեր ազգի համար բարեթաղդութիւն է այս հեռատես, նուրբ և իմաստուն ըմբռնումն ունենալն ոչ թէ լոկ խօսքով, այլ գործնականապէս մարմնացնելով թէ հայկական ազգը իւր բարոյական և ազգային կեանքը եկեղեցու մէջ գտած է և կգտնէ մանաւանդ այժմ։ Ուրեմն եկեղեցին բարեկարգել կնշանակէ Հայութեան կենդանութեանը նպաստել։ ԱԵՀափառ Կաթողիկոսը քաջ հասկանալով այս վերաշված երկու էական պիտոյքն և ցանկացած է հոգալ, կեանքի բանը քարոզել և առ ամենայն բարի և ազնիւ գործ ոգեւորող կանոնաւոր երգեցողութիւնն ընդհանրացնել Հայաստանի եկեղեցու մէջ, որով կրօնը իւր նախնական կենդանացուցիչ վսեմ նշանակութիւն պիտի ստանայ։

Ուրեմն չենք կարող արդարե ցցաւել, երբ կտեսնենք, որ թէ ԱԵՀափառ Հայրապետի այս փրկարար նպատակը և թէ նոյն նպատակին հանելու համար հնարագործված ընտիր միջոցներն արժանավայել գնահատութեամբ և երախտազիտութեամբ չեն յիշվում ոմանց կողմից։ Համեմատելով անցեալ անկատար, տեղին համեմատ, հազար տեսակ անկանոնութիւններով լի և անհարազատութիւններով զարդարված երգեցօղութիւնը ներկայ կանոնաւոր, ներգաշնակ, ընդ միշտ օրէնքի տակ դրված, հարազատ, ամենքի համար և ամեն տեղ մի օրինակ երգեցօղութիւնը, մոտածող և ճշմարտասէր Հայն պիտի մսիթարգի անշուշտ այս մշտական անկողնապտելի և թանկագին ժառանգութեամբ եկեղեցու և ազգի համար իւր անմոռանալի Հայրապետից թողած, որ միենայն ժամանակ նորա մահկանացութիւնը անմահացնող գործերից մին պիտի լինի։

Ուստի առաւել ևս ցաւալի են «Մեղու Հայաստանի» լրագրի (№ 26) անձիշտ ակնարկութիւնները ԱԵՀ. Հայրապետի ցանկութեամբ և աշխատութեամբ հրատարակված ձայնագրութեան մասին։ Լրագիրը ոմանց զանգատներին համակրելով կզրէ թէ Շահնշաներն այն չեն, որոնց ոռութ է ժառանգութեամբ ժառանգութեամբ անզամ կարօղ են շատ անկանոն երգին կամ եղանակին սովորած լինել, բայց ոտ մի՞թէ հիմն է, որ երգն իւր նախնական եղանակով ձայնագրել ձեռնարկօղն ժողովրդի ականջին ընտելացածն անշուշտ ընտիր համարէ։ Այս խօսքն ակամայ յիշեցրեց մի եղելութիւն, որ կպատմի մայրաքաղաքի մէջ թէ բարձրաստիճան պաշտօնեայ մի Պարսկաստանից եկած լինելով Կայսերն Շահի յարգանք արտայայտելու, հրաւիրված էր առանձնապէս նորա համար ապսպարված ԱԻՀՀԷԼՄ ՏէԼ երգախաղին (օպէրային) ներկայացմանը։ Ներկայացումը սակաւ ինչ ուշանալով, դեսպանը մտել էր թատրօն, երբ բազմաթիւ նուազածուները լարելիս եղել են իւրաքանչիւրն իւր նուազարանը, որից լսելի կլինին սովորագար մի շատ խառն և բազմահնչիւն ձայներ, որ և կյիշէ երևի ամեն թատրօն

յաճախողը, Թատրօնի վերջը զմայլած դեսպանից կհարցնեն թէ երգախաղի որ կտորն առաւել հաւանած է, նա կպատասխանէ թէ մի կտորն այնքան հաւանած է, որ իւր կեանքում երբէք պատահած չէ նմանօրինակ բան լսել, և թէ կփափաղէ նորէն լսել նոյն կտորը, Առաւել Ճիշդ իմանալու համար դեսպանի ցանկացած հատուածը, կրկին կներկայացնեն Վ.իշէլմ Տէլ: Այս անգամ վարագոյրը Ճիշդ նշանակված բոպէին կրարձրանայ, դեսպանի մտնելուն պէս, որովհետեւ առաջին անգամ ուշացնելուն համար թատրօնի կառավարիցն յանդիմանված էր: Երգախաղի միջոցին ամեն ընտիր հատուած երգելուց յետոյ, կհարցնեն դեսպանից, այն չէ արդեօք նորա հաւանածն, որին նա բացանական պատասխան կտայ ամեն անգամ: և այսպէս մինչեւ վերջը, Երկար հարց ու փորձից յետոյ հազիւ իմացվեցաւ, որ սքանչելահիւս Վ.իշէլմ Տէլի փոխանակ դեսպանին հաւանելի եղած է նուագարաններ լարելու միջոցը: Աչա անմշակ ճաշակ ունեցողների ականջը: Արդար և իրաւ կլինէր մի՞թէ այսպիսի ճաշակին յարմարվել: Մեր ժողովրդի ականջը սովորած է ոչ թէ կենդանացնող, այլ խլացնող զափ ու զուռնային: Աւրեմն հաւատանք մի՞թէ, որ ոմանք պիտի պնդեն թէ եվրոպական երաժշտութիւնը անպիտան է, աւելորդ է, որովհետեւ ժողովրդի ականջը սովոր չէ. . . .

Յետոյ լրագիրը կյարակցէ թէ յայնուհան եւ լուսադները շարունակների նուան են, որոն հաճայիւն են եղել նորին 0՝ 10 մետր այն է Տաճկառաւունի եղանակները, պահպահելու շահուածների և պահպահութեան եղանակները վերայ աւշտ ու բարձրացնող չեն: Եթէ այս խօսքերի զրոյը յօժարէր հանգամանօրէն տեղեկանալ գործին, այսչափ սխալ գելու չէր ինքն և չէր սխալեցնի ընթերցօղներին, այլ կիմանար, որ ձայնագրած եղանակները նորին Օծութեան հաճյականներ չեն և ոչ Տաճկառաւտանի միայն, այլ բուն հին հայկական եղանակներ են, որոնք պահպանված են աւելի բազմամարդ հայրենակ տեղերում: Արդարեւ Էջմիածնում պիտի պահպանված լինէր հին երգեցաղութիւնը: Այս, Էջմիածնն իմաստութեան մոցը եղած է երբեմն, Էջմիածնի միաբանութեան մէջ գտնված են զիտուններ, աստուածաբաններ, տրամաբաններ, քաջ երգիչներ, բայց այլևայլ ժամանակների ազգիս բազմադէտ հանգամանքներն ոչնչացրել էին դպրոց և զիտութիւն և Էջմիածնը թափուր մալով, հարկաւ երգեցաղութիւնն ես, որ ողի մէջ կցնդէր, կարօղ եր աղաւաղվել և խանգարվել, ընդունելով իւր մէջ պարսկական անկապ և անհարազատ եղանակներ, քանի որ ոչ միշտ պէտք եղած պաշտպան և հովանաւոր կունենար: Եւ եթէ Էջմիածնում չեին մնացած, Խուսիայի ուրիշ որտեղ կարօղ էին պահպանվել հին եղանակները: Իսկ Կ.Պօլսում պահպանված եղանակը բուն Էջմիածնի եղանակն է, որ տարած էին այնտեղ ԺԴ և ԺԵ դարերից յաճախօղ Էջմիածնի միաբանները: — որն առաջնորդութեան պաշտօնով, որը պատրիարքական աթոռն ամբառնալով և որը նուիրակութեամբ զնալով, որոնց զիտաւոր պաշտօնն էր նախանձայոյզ լինել եկեղեցական բարեզարդութեան և մեր նախնական աւանդների անթերի պահպանութեան, որոնց մինն ևս

աղգոյին կրօնական զգացմունքը վառ և կենդանի պահող երգեցողութիւնն է, Կաթողիկոսներն ևս ոմանք երթեւեկութիւն կանէին Քիւզանդիոն և նոցա սովորութիւնն էր փշթեռանդ աշխատութիւն նաև մեր երգեցողութեան եղանակների անկորուստ և անխառն պահպանութեան մասին։ Յիշելու է նմանապէս Սիմէօն կաթողիկոսի Թէոդորոս սարկաւագն, որից կրկնի փափառվ սովորած էին Հայրենի թանկագին եղանակը Ա.Պօլսի Հայրենատենչ Հայերը։

Եթէ նայենք ոչ միայն Ա. Պօլս, Հապա և Երուսաղէմ, Սիս, Զմիւռնիա, Քրուսսա, Նիկոմիդիա և այլն, որոնք մեծ աժուռներ են, և Էջմիածնից Հեռու լինելով այնքան աւելի փափառվ և Հաւատարմութեամբ կարհպաննեն Հայրենի եկեղեցու աւանդութիւնները, մինչև անգամ և Վենիամիկը, կտեսնենք գրեթէ նոյն եղանակները, որ այժմ ձայնագրված են, ոչ շատ տարբերութեամբ։ Եթէ գժրաղզարար անպատեհ Հանդամանքների բերմամբ, չորացել է այն մեր ծառը, որ պատուաստված է մի ուրիշ տեղ, մի՛ թէ անշուշտ մեր չորացածն է նախամեծարելի փոխանակ պատուաստված տեղից փոխ առնելու, մանաւանդ յայտնի է առ Հասարակ, և Ճշմարտութիւնը կպահանջէ որ խոստովանենք, որ եկեղեցու բարեկարգութիւնը և բարեղարդութիւնը առաւել պահպանված է Թիւրքիայում։ Երբ Ա. Պօլսում Աւագ եկեղեցու, Սամաթիայի, Պալտահի, Վաղաթիայի եկեղեցիներում բազմաթիւ զպիրներ խմբեր կազմած առաջաւոր հոգեսէր անձների զպրապետութեամբ փառք Համարած են ձայնագրութիւն սովորել և դասից երգել, անոյլայլակ պահելով շարականների եղանակները։

Յետոյ լրագիրը կասէ. « Հարկաւոր էր լուս Երեսներէն հրահիւ, առ այս առելութէ և ըստութեամբ յայնաբրել այն, որ առելի ախորժելի էր։ Երբ ոք մին կկամենայ առանց ստոյդ տեղեկութիւն սահալու որեիցէ գործ քննել։ այսպիսի սիսալ զատողութեան հչասնի անշուշտ։ Լրագիրը կամեցել է ասել ոչ թէ լաւ երգեցիկներ, այլ թէ երգեցողութիւն իմացողներ հաւաքելու էր։

Պարզ կերպի, որ լրագրին անյայտ է Ա.է. Կաթողիկոսի տեօրէնութիւնը, որ երբ ձայնագրութիւն կպատրաստվէր քանիցս ժողովներ եղած են և Հարցվեցան որոնք յայտնի էին Հին Եպիսկոպոսներից և վարդապետներից և ինչ որ կանոնաւոր և Հարազատ ճանաչվեցաւ, ընդունվեցաւ։ Այսպէս օրինակ Յարութեան Աւետարանից յետոյ ասելի Փառ+ յոր+ թէ, Տէր, Նոր+ որ+ լու+ և այլն Էջմիածնում երգվածներ են ձայնագրված։ Յիշ+ յոր+ից յետոյ տօն օրերին երգելի Անբաժանելին երգը Ա. Անետկից առնված է Սրբ. Գարբիէլ Արքեպիսկոպոս Այլազեանի (որ Հին Եղանակների քաջ շարականագէտ է) երգածով ձայնագրելով։ Եւ Առուսիայի Հայերի մէջ կգտնվի արդեօք մի ուրիշն, բացի նոր ձայնագրագէտներից, որ իմանար Անբաժանելի երգել։ Խոյնպէս Գարբիէլ Արքեպիսկոպոսի երգածով ձայնագրված է ու Հաղորդութեան ժամին երգելի Ու Աման հաց Հենաց, և այլն, Ազգի Հայրապետի և Էջմիածնի Կաթողիկէ Եկեղեցու տօներին Հանդիսաւոր կերպով սեղանի առաջ երգելի Եւ Լու Կառաջ-Թէան քարոզը

Սրբ. Գէորգ Արքեպիսկոպոս Վեհապետեանի երգածով է ձայնագրված, և այլն և այլն անութեան կամ եպիսկոպոս կիսոստովաներ թէ նա չդիտէ միւռոն օրհնութեան կամ եպիսկոպոս ձեռնազրելու քաղողների եղանակներ և ուրիշ քանի մի ծանր երգեր և ստեղիներ, ուրիշներն ևս մոռացել են. Արդին որ Էջմիածնում, որ շնորհի աղբիւր պիտի լինէր, մոռացված էր, որտեղ, Թիֆլիսում մի՞թէ պիտի պահպանվէր հին եղանակը, որտեղ հայերէն խօսելն անգամ շատ վաղուց չէ որ սկսած են, և Թիֆլիսի մօտ քանի տեղ դեռ ևս ցայսօր վրացերէն կքարոզեն եկեղեցում. Միւս կողմից շատ տեղերում, մեծ մասամբ ութ ձայնի փոխանակ երեք կամ չորս ձայնով կերգէին խառնիխուռոն և քմայարդար եղանակներով, և ոչ միայն գաւառներում և նահանգներում զանազան կերպով, այլ գրեթէ իրաքանչիւր քաղաք և զիւղը, մեր աշխարհաբար բարբառների նման, իւր եղանակներ ունէր, բոլորովին մոռացած լինելով նախնականը. Մինչդեռ Պօլիս կամ Երուսաղէմ, որ մեծ աթոռներ են, նախանձախնդիր լինելով հայրենի եկեղեցու կարգերին, յաջորդաբար պահպանած են նոյն հին եղանակներն. Ուրիշն ոչ մի տեղ չգտնված երգերը միակ գտնված ընտրելագոյն և հարազատագոյն աղբիւրից վերցնելը և ձայնագրելը կարօղ է մի՞թէ երրեխցէ կամայականութիւն համարվել.

Արդէն անցեալ տարի մի մի օրինակ ուղարկվեցան Փարիզ շարական, ժամագիրք, պատարագի երգեր բազմահաշակ հայագէտ և հնագէտ պ. Դիւլօրիէին նորա խնդրով. Պ. Դիւլօրիէն կծանուցանէ թէ նա կպարապի հայկական հին ձայնանիշների հետազոտութեամբ և կկարծէ թէ ներկայ ձայնագրութիւնը հնագոյն համարելու է.

Մենք կցանկանք ճշմարտութիւն միայն բացարձակ ասել առանց բնաւ կամք ունենալու վիրաւորել ոք մին ձայնագրութեան մասին ասածովս, Գուցէ նեղացօղներ գտնվին հին հոգեորականներից և աշխարհականներից և զանազան տեղերում գտնվող ուսուցիչներից, որոնց իմացածն այժմ անպէտք գարձած է, ուստի գուցէ և զրկված են եկամուտից. Սակայն մենք ճշմարտութիւնն ամեն անձնական հաշուրից վեր պիտի զասենք. Amicus Plato, sed magis amica veritas (Պղատօնը բարեկամն է, բայց աւելի մօտ բարեկամն է ճշմարտութիւնը).

Այս բոլորն ասելուց յետոյ, այս ևս կյայտնենք ահա, որ եթէ արդարե Թիֆլիսում կայ ութ ձայն ամբողջ զիւցեղոյն և բոլոր հարցեր, ստեղիներ, շարականներ իմացօղը, զա մի զիւտ պիտի լինի և Վեհափառ Կաթողիկոսը, իրրեւ նախանձախնդիր և հետաքրքիր անձն, պատրաստ է ճանապարհածախսն ևս վճարել Էջմիածին գալու, որ նորէն ձայնագրվի, և ուրախութեամբ կը բին հրատարակելու է, միայն թէ թող գտնվի իմացօղը և զայ. Վեհափառ Կաթողիկոսը կփափազէր եկեղեցական երգեցողութեան աղքային պատուական աւանդը տարածել մեր աղզի մէջ հաստատուն կարգաւորութեամբ, որ նախական և հարազատագոյն երգեցողութիւնը վերակենդանանայ, ամեն տեղ

Հնչվի և աղատ մնայ գոնէ այսուհետեւ դէպի առաւել խանգարումն գնալու կամ դէպի զանազան անհարազատ և օտարոտի նորածեռութիւններ խոտորվելու վտանգից, Զենք կարօղ պնդել թէ Սահակի և Մերոպի կարգած նախնական եղանակն անյեղափոխ մնացած լինի և զուտ եկած հասած մինչև մեր օրերը և թէ մեր եկեղեցական երգերի մէջ խառնված չլինին երբէք Մարաց և Ասորիների մրմունջները, Պարսիկների բարձրագուշ ձայները, Թիւքերի և Յոյների եղանակները, բայց անտարակուսելի է, որ արմատը վաղեմի եղանակ և ուժն ձայների որոշումն մեր շնորհալի ներսէս Հայրապետի օրից մնացած պիտի լինի և ահա մեծ, գնահատելի արժանաւորութիւնը այդ արմատը ճանաչելու և արդիւնաւորելով արձանագրելու մէջ էր, Ուստի սորանով ինքն ըստ ինքեան կհամարվի ոչ բոլորովին հիմնաւոր լրագրի այն խօսքը թէ «Յուսուն», «Դամանուկ» կողմէ ոյտ մեւլը, որով կվերջացնէ նա իւր նկատողութիւնը, Ժամանակը ոչինչ չպիտի կարօղանայ ուղղել, Քանի որ այժմ չկայ ուրիշ իմացօղը, տասն—քսան տարուց յետոյ նոր պիտի չծնվի, Ժամանակն ահա այս է անտարակոյս, որ Վեհափառ Կաթողիկոսը շահեցաւ և ամենածախ ժամանակի կորուստից աղատեց հայկական հին երգերը և շարականները, գոնէ որոնք մնացել էին ցայժմ, դիւրացնելով միանգամայն երգեցօղութիւն սովորել ցանկացօղների մեծամեծ դժուարութիւններն եւս, Անկասկածելի է, որ ժամանակին ապագայ հայրենասէր սերունդները, մեզանից աւելի անաչառապէս գործին նայողները, անկեղծ և անջինջ երախտազգիտութիւն ունին մատուցանել անմոռանալի աղքասէր Հայրապետին եկեղեցուն և ազգին թողած իւր անզին ժառանգութեան համար, որ միենցն ժամանակ դարեր յաւիտեան պիտի վկայէ թէ մեր Վեհափառ Կաթողիկոսը հեռատես և իմաստուն հայրենասիրութեամբ, նախանձախնդիր լինելով հայրենի փառքին և պատուին, փափագած է միշտ հայկական աղզի բարոյական վերակենդանութիւն և ամենայն հնարաւոր միջոցներով աշխատած է նոյն սուրբ գործի համար:

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ մէր արդիւնաւոր գիտնական պրօֆէսսոր մեծ. պ. Պատկանեանից նոր հրատարակած գրքով՝ ուսերէն Օ մնիմոմ խոհօք Տագլատ - Պալաչար և բերգամ Ինդա (Տագլատ - Պալաչարի կարծիքական արշաւան դէպի Խնդոսի ափերը), Պ. Պատկանեանը չէ քննում Տագլատ - Պալաչարի ամբողջ թագաւորութիւնը, այլ նորամի արշաւանը միայն, Ոմանց ասորագէտների կարծիքով Տագլատ - Պալաչարը, որ կթագաւորէր Ասորեստանում 745—727 թ. Ք. Ծ. առաջ, նուածել է բոլոր Պարսկաստան և Աֆգանիստան մինչև Խնդոս գետը, Իսկ պ. Պատկանեանը գիտնական հետազօտութեամբ կապացուցանէ, որ Տագլատ — Պալաչարը Մեղիայից դուրս դէպի արևելք գնացած չէ:

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ պ. Էմին Տէր Գրիգորիանի հեղինակած էլ շարէս ինչ անունով կատակերգութիւնը:

Բաթումից կհաղորդէ «Արարատին» պատուական թղթակիցը, թէ Բաթումի մէջ հայկական եկեղեցի չկար. մի փոքրիկ սենեակում Արքահամ անունով մի վարդապետ կապատարագէր. Անակնկալ եկաւ այստեղ Փօթուքահանայ Տ. Կոստանդին Տէր Ստեփանեան, որ իւր քաղցր և հրապուրիչ ձայնով և ժամասացութեամբ զրաւեց ժողովուրդը և ձեռնամուխ եղաւ եկեղեցի կառուցանել. Չորս ամսում կանգնեցրեց եկեղեցի և մի փոքր ուսումնարանն ես երկու սենեակից բաղկացած, եկեղեցուն կից. Դրամը ժողովնեց ամեն գնացող եկողից և տեղիս բնակիչներից. Անցեալ մեծ պահքին եկեղեցական բարեկարգութեամբ և ժամասացութեամբ միսիթարեց բնակիչներին և օտարականներին. Բաթումի կաթոլիկ Հայերն ոչ միայն քանակութեամբ աւելի են քան առաքելական (լուսաւորչական) Հայերն, այլև աւելի հարուստ են. Արդիինի եպիսկոպոսն եկաւ Բաթում Հայերին որսալու: Արզումի առաջնորդն ես եկաւ, բայց շուտ Տրապիզոնով դարձաւ Արզում: Տ. Կոստանդինը գնաց Թիֆլիս, մօտ 600 մանեթի զարդեր բերեց և զարդարեց եկեղեցին. Ի՞նչ տպաւորութիւն՝ արեց տեղիս Հայերի վերայ զանգակի ձայնը՝ որ իւրեանց կեանքում չէին լսած կաթուղիկէի վերայ. Մի հարուստ և լաւ ժամասաց Հայ Ստեփան անունով Տրապիզոնից եկաւ Բաթում զանգակի ձայն լսելու: Ինքն ևս զպութիւն արեց և եօթն օրից յետոյ վերաբարձաւ: Տեղիս կաթոլիկներն ուժեղ են և անդադար կաշխատեն Հայերին որսալ ։

Թէզըլու գիւղից (Կողիրի զաւառից) պատուական թղթակիցը կորէ «Արարատին». թէ մայիսի 2ին ժողով եղած է այնտեղ դպրոց հիմնելու: Տեղին ծերունի և եռանդուտ Տէր Դանիէլ քահանան իւր հին տունը ընծայած է եկեղեցուն մշտնչենաւորապէս դպրոց շինելու: Միւս օրը ժողովուրդը հաւաքած, Տէր Դանիէլը ինքն սկսած է բահը ձեռին դպրոցի հիմք բանալ և նորան հետեւած է ժողովուրդը: Թղթակիցը կոովէ յիշված քահանայի հաղուագիւտ ազգասիրութիւնը և սիրտը առ իւր ժողովուրդը: Այն տեղից գնալով է վշիլար գիւղը, թղթակիցը տեսել է, որ ժողովուրդը դպրոց շինելու բոլոր պարագաներ պատրաստած կաշխատէին: Այն տեղից գնալով Նէրլու, կտեսնէ որ այնտեղ ժողովուրդը արդէն աւարտելու վերայ է դպրոցի շինութիւնը և ուսուցիչ հրաւիրելու կիորհրդածեն: Ալէրլուի մէջ ընտրած են արդէն երեք հոգաբարձուներ, որոնց հաստատութեան խնդրագիրը պիտի մատուցանվի ԱԵՀափառ. Հայրապետին: » Այս միսիթարական երեսյթով քաջալերված ոչ պիտի շխնայէ իւր ձեռից եկած ամենայն նպաստաւորութիւն ուսումնասէր ժողովը յառաջադիմութեան համար: Գործելու ժամանակը հասել է, որ հայազն ժողովուրդը իւր դարեւոր թմրութեան և տղիտութեան գնից զարթնէ:

Սյն փրկարար նպատակով, ԱԵՀափառ Կաթողիկոսը, որ Գէորգեան ձեմարանով կենդանացրեց Արարատեան զաշտը, ցանկալով որ ժողովը սէրը ղեղի դպրոց միշտ վառ պահի, նշանակած էր Երևանի նահանգի

թեմական վերատեսուչ արժ. Կարապետ Վ. Ա. յվաղեանին, որ բարեխիղճ և աշխատասէր անձն է: Սակայն արժ. հայրը Երեանում ուսուցչական պաշտօնութեան վրա աշխատառ կմտածէր գտնել մի անձն, որ բոլորովին միմիայն այս բազմազբաղ և կարեսր գործով պարապի, ուստի բարեհաճեց կարգել պ. Պերճ Պոօշեանին, յատուկ ռոճիկով, թեմական վերատեսչի օգնական և գործակից: Կյուսանք որ պ. Պոօշեանը, որ աշխատասէր, բանիմաց, ջերմեռանդ և մանաւանդ Երեանի նահանգը քաջ ճանաչող անձն է (ինքն բնիկ Աշտարակցի լինելով), իրագործելու է Ա. Հայրապետի ցանկութիւններն Երեան քաղաքի և թեմի բոլոր գործութեան վերաբերմբ և միմիմարելու է ուսումնատենչ ժողովուրդը նորա փափազներին բաւարարութիւն տալով: Ա. Կաթողիկոսը բարեհաճեց շնորհել պ. Պոօշեանին կոնդակ ապրիլի 28. 1879. № 179:

Սրբազան Մակար Արքեպիսկոպոսն ուղեղորեցաւ Ա. Էջմիածնից դեպի Ռուսիա ապրիլի 28ին Բեսսարաբիայի և Նոր — Նախիջևանի առաջնորդութեան պաշտօնով: Կրարեմաղթենք Սրբազան Հօրն ամենայն յաջողութիւն ազգին և եկեղեցուն ծառայելու, առաքելական հոգով և ջերմեռանզութեամբ իւր նոր վսեմ պաշտօնի մէջ Բեսսարաբիայում: որ բազմակարօտ թեմ է:

Ա. Հայրապետ Կաթողիկոսը շնորհեց կոնդակ (մայիսի 4, № 195) Փարբի գիւղի սուրբ թարգմանիւ Ղաղար Փարբեցու անունով բացված նորահաստատ ծխական գործոցի Հոգաբարձուների — Խաչատուր Տէր Մկրտչեանի, Մեսրոպ Ետկարեանի, Մահտեսի Յակոբ Ղաղարեանի և Ներսէս քահանայ Հայկագունու անունով:

Օդէսսայից պ. Գրիգոր Զալինեան կհաղորդէ « Արարատին » թէ նիկօլայի աստրախանցի մայիօր Թումաս Նացվալեանը սկսած է կատարել իւր խոստութիւն Օդէսսայի Հայկական եկեղեցին մեծացնելու մասին: Յատակագիծը և հաշիւը նշանակելով մեծ, պարօն Նացվալեանը կտակել է, « ինքն ծերացած և տկար գոլով »: 7000 մանէթ եկեղեցու շինութեան համար: Յատակագիծը ուղարկված է հաստատելու և պ. Նացվալեանը կցանկայ իւր կենդանութեամբ սկսել այս աստուածահաճոյ գործը: Պ. Զալինեանը կյայտնէ Օդէսսայի Հայերի ուրախութիւն և խորին շնորհակալութիւն պ. Նացվալեանին և արժ. Գրիգոր քահանայ Խորասանճեանին, որ անձամբ գնացել է նիկօլայի և փութացրել է այս գործը: Մենք կմասնակցենք Օդէսսայի հասարակութեան շնորհակալութեանն առ պ. Նացվալեան, յայտնելով հրապարակաւ նորա կրօնական, ազգասիրական և ջերմեռանդ զգացմունքը:

Տիսուր տեղեկութիւն պիտի մուծանենք մէր տարեգրութեան մէջ: ապ-
36

րիի 26 ին վերջացրեց իւր երկրաւոր կեանքի փշալի ասպարեզը հայկական նոր գրականութեան քաջ ախոյեան Ստեփանոս Նազարեանը: «Հիւսիսափայլ» օրագրի բազմարդիւն և անխոնջ աշխատասէր հրատարակօղը: «Արարատի» Մօսկվայի թղթակիցը իւր իմաստալի նամակը այս մահի մասին, որով հայկական հասարակութիւնը մի քաջ, իմաստուն և անխոնջ աշխատող հայասերից զրկվեցաւ, այսպէս կվերջացնէ: «Նազարեանը համարձակ կարօղ է ասել. զբարւոք պատերազմն պատերազմեցայ, զընթացսն կատարեցի, այսուհետեւ կայ մեայ ինձ յաղթութեան պսակն: Իրբև քանքարաշահ ծառայ նա պիտի լսէ Տէրի խօսքը: «Ազնիւ և հաւատարիմ ծառայ, մուտ յուրախութիւն Տեառն քու:»

Մարտի 31 ին մեռաւ Մօսկվայի միտրոպոլիտը: Ապրիլի 8 ին նշանակվեցաւ նոր միտրոպոլիտ Մակարիոս Արքեպիսկոպոսն, որ հոչակված գիտնական և բարեսէր անձն է: Նորա բազմաթիւ հեղինակութիւններից ոմանք թարգմանված են ֆրանսերէն և գերմաներէն: Բոլոր հոգով նուիրված լինելով գիտութեանն և գրականութեանը Մակարիոս Արքեպիսկոպոսն բոլոր իւր ցանկութիւնները կեղրօնացրեց գիտութեան և լուսաւորութեան զարգացման մէջ Ռուսիայում, և Ռուսիայի հոգեոր լուսաւորութեան պատմութիւնը յաւիտեան գրելու է նորա անունը իւր շնորհակալու էջերում: Նա Ռուսիայի հոգեոր լուսաւորութեան անօրինակ հովանաւոր հանդիսացաւ: Նորա ուղղութիւնը հասկանալու համար բաւական է յիշել, թէ միմիայն իւր հեղինակութիւններ վաճառելով ժողոված գումարները ինչպէս կգործ դնէ: 1867 թուին նա նուիրեց 120,000 մանէթ, իւր մահից յետոյ իւր անունով պարգևներ նշանակելու լաւագոյն շարադրութիւնների համար ուուսերէն, մի տարի աստուածաբանական և միւս տարի աշխարհական գիտութիւններից, Սինօդի և գիտութիւնների Ճեմարանի որոշմամբ: 1869 թուին նա ընծայեց Կիեվի Հոգեոր Ճեմարանին 25,000 մանէթ, որ սորա տոկոսին ամեն տարի վճարեն լաւագոյն կրօնական շարադրութիւնների համար: Նոյն տարին նա սահմանեց իւրաքանչիւր տարեկան պարգև 1000 մանէթ լաւագոյն ուսումնական Ճեռնարկների համար դպրոցական առարկաներից: Այլ նա սահմանած է տարեկան երկու պարգև, 2000 մանէթի իւրաքանչիւրն, մին յօդուտ Պէտէրբուրգի Հոգեոր Ճեմարանի չունեոր ուսանօղների, միւսը յօդուտ Լիտովեան հոգեոր դպրոցի չունեոր աշակերտների:

Մայիսի 15 ին սկսվեցան Ճեմարանի քննութիւններ: Առաջին քննութիւնը կրօնից էր, որ բոլոր աշակերտներն յաջող պատասխանեցին: Առհասարակ մինչև այժմ եղած քննութիւնը շատ յաջող էր և յուսալի է, որ նշյալէս յաջողութեամբ պիտի վերջանայ, որովհետեւ ուսուցիչներն հոգով և Ճշմարտութեամբ պարապած են տարվան ընթացքում: Մենք շատ ուրախ ենք, որ այս տարի քննութիւններին ներկայ կդտնվին, բացի Ս. Աթոռուին միաբաններից, Թիւրքիայից եկած եպիսկոպոսացու գերապատիւ հայրեր

Մելքիսեդեկ Վարդապետ Մուրագեան, Եղիշիկ Վարդապետ Ապահովունի, Պետրոս Վարդապետ, Գրիգորիս Վարդապետ և այլն, Ականատես լինելով Գէորգեան ձեմարանի արդիւնաւորութեանն և քաջ հասկանալով նորա կարեւորութիւնը հայկական ազգի համար, քարոզ լինելու են, ուր որ պատահին պատուական Հայրերն, և Կյուսանք, որ աշխատելու են, իւրաքանչիւրն իւրօքսանն, նպաստել ամենայն կերպով նոյն ձեմարանի օգտակակար կարեւորութեան գաղափար ընդհանրացնելուն:

Սա է Ներկայ 1879 թուի Գէորգեան ձեմարանի հարցաքննութիւններից ցուցակ:

Դասերը դադարեցին մայիսի 12-ին շաբաթ օրը:

Ամիս	օր	Առարկաներ	Թասարաններ	Ընթերականներ (Ասսիստէնտներ)
Մայիսի 15	Երեքշաբաթի	ԿՐՈՆԱԳԻՏԱԲՈՒԹԻՒՆ Ուսուցիչներ են. Անդրէաս Արքեպիսկոպոս և Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեան	, , , , Դ. Ե.	Անդրէաս Արքեպիսկոպոս Խորէն Վ. Ստեփանէ
16	2րեքշաբաթի	ՆՈՅՆ	Ա. Բ. Գ. , , ,	
18	Ուրբաթ	ՄԱՏԵՄԱՏԻԿԱՅ Ուսուցիչներ են Մարտիրոս Սիմեոնեան և Ս. Արամելիք- քեան	, , , , Դ. Ե.	Գ. Տէր Գրիգորեան Ս. Արամէլիքեան
19	Շաբաթ	ՆՈՅՆ	Գ. Բ. Ա. , , ,	
22	Երեքշաբաթի	ԸՆԴՀԱՆ. ՊԱՏՄՈՒԹ. Ուսց. Խորէն Վ. Ստեփանէ ԸՆԴՀԱՆՈՒԹ ԱՇԽԱՐԴ. Ուսց. Սարգիս Սարգսեան	, , Գ. Գ. Ե.	Ս. Սարգսեան Վ. Արովեան
23	2րեքշաբաթի	ԸՆԴՀ. ԱՇԽԱՐԴԱԳՐ. Ուսց. Սարգիս Սարգսեան	, , Գ. Գ. , ,	Վ. Արովեան Կ. Կոստանեան
25	Ուրբաթ	ԹՈՒՍԱԿԱՆ ԼԵԶՈՒ Ուսց. Վ. Արովեան	, , , Դ. Ե.	Խորէն Վ. Ստեփանէ Ս. Պարզեան
26	Շաբաթ	ՆՈՅՆ	Ա. Բ. Գ. . , ,	
29	Երեքշաբաթի	ԵԿԵՊԵՑԱԿԱՆ ՊԱՏՄ. Ուսց. Կ. Կոստանեան	, , , Դ. Ե.	Գրիգոր Ե. Աղափիրեան Մ. Սիմէօնեան
30	2րեքշաբաթի	ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄ. Ուսց. Կ. Կոստանեան	, , Բ. Գ. , ,	Խորէն Վ. Ստեփանէ Մ. Սիմէօնեան
Յունիսի 1	Ուրբաթ	ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԶՈՒ Ուսց. Կ. Կոստանեան	, , , Դ. Ե.	Գրիգոր Ե. Աղափիրեան Մ. Սիմէօնեան
2	Շաբաթ	ՆՈՅՆ	Ա. Բ. Գ. , , ,	Խորէն Վ. Ստեփանէ Մ. Սիմէօնեան Կ. Կոստանեան

5	Երեքշաբաթի	ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ Ուսց. Մ. Սիմէօնեան	, , , , Ե.	Գ. Տէր Գրիգորնան Վ. Արովեան
		ԹՈՒՍԱԿԱՆ ՊԱՏՄ. Ուսց. Խորէն Վ. Ստեփանէ	, , , , Դ.	Վ. Արովեան
		ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ Ուսց. Խորէն Վ. Ստեփանէ	, , , , Դ.	Մ. Սիմէօնեան
		ԹՈՒՍԱՅԹԻ ԱՃԽԱԲՀ. Ուսց. Վ. Արովեան	, , , , Հ.	Խ. Վ. Ստեփանէ
		ՀԱՅԻԿԱՆ ԱՃԽԱԲՀ. Ուսց. Կ. Կոստանեան	, , Բ. , , Հ.	Մ. Սիմէօնեան
7	Հինգշաբաթի	ՖՐԱՆՍԱԿԱՆ ԼԵԶՈՒ Ուսց. Խորէն Վ. Ստեփանէ	, , , , Ե.	Գրիգոր Ե. Աղափիրեան Վ. Արովեան
8	Ուրբաթ	ՆՈՅՆ ՏԱՐԿԵՐԻՆ ԼԵԶՈՒ Ուսց. Գ. Փայլակեան ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ	Ա. Բ. Գ. , ,	
9	Հարբաթ	Ուսց. Ա. Սագինեան ՎԱՅԵԼՎԱԳՐՈՒԹԻՒՆ		
		Ուսց. Մ. Քէրէստեճեան ՀԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ		
		Ուսց. Սահակ Սարկաւագ		Գրիգոր Ե. Աղափիրեան Խորէն Վ. Ստեփանէ

Բնական պատմութեան քննութիւնն, որի ուսուցիչն է բժիշկ Գ. Տ. Գլ-րիգորեանը, պիտի լինի սեպտեմբեր ամսին, դասընթացը ուշ սկսված լինելու պատճառով:

Մայիսի 20ին փառաւոր արժանավայել և հայատէր սրտի համար մխիթարական հանդէսով կատարվիցաւ ազգիս Ա. Ե. Հափառ Հայրապետի Օծան ԺԲ. տարելարձը՝ Նախընթաց շաբաթ երեկոյին եկեղեցական սրտառուչ և գեղեցիկ հանդէսով Ս. Աթոռիս միաբանական ուխտը հրաւիրեց իւր առնելի մեծագործ Հայրապետին ի Ս. եկեղեցին: Երկրորդ օրը առաւտեան քաղցրանուագ ժամասացութենից յետոյ եկեղեցու երեք անգամ կրկնվող զանգակը իմացրեց միաբանութեանը Սուրբ Հայրապետի համար մաղթանք անելու ժամը: Ամենքը շտապով ժողովվեցան և խմբվեցան Վ. Հարանի առաջ արևմտեան կողմից, մինչդեռ Հայաստանի եկեղեցու մեծանուն Գահակալը — Ա. Ե. Հափառ Ազգապետն իւր Հայրապետական բոլոր փառքով զահիճի լուսամնից քաղցրութեամբ կանարկէր իւր սիրելի զաւակներին: Մաղթանքի միջոցին երեք ճառ կարգացվեցաւ, որոնցից առանձին ուշադրութիւն զրաւեց Ճեմարանի աշակերտների կողմից կարգացված սրտաշարժ ճառը իւր բովանդակութեամբ, որ կխոստանանք միւսանգամ հրատարակել: Ա. Ե. Հափառ Հայրապետի օրհնութիւնը ստանալով մօտեցան իշամբոյր Սուրբ Աջին նախ միաբանական ուխտը, յետոյ Ճեմարանի աշակերտներն իւրեանց ուսուցիչներով, այնուհետեւ շատ այցելուներ, որոնցից շատերն ես եկած էին Երևանից, վերջը Ա. աղարշապատի դպրոցների

օրիորդներ և տղաներ իւրեանց զգայուն ճառերով։ Մեր ականջների մէջ զեռ ևս կհնչվին Ա-եհափառ Հայրապետի իմաստալի առ ճեմարանի ուսուցիչներն ուղղած անմոռանալի խօսքերը, սրով կիրախուսէր նոցա քրիստոնէական և ազգասիրական հոգով դաստիարակել աշակերտներին, որով նոքա մի վսեմ աղքօգուտ պաշտօն կատարած պիտի համարվին։ Կէսօրին վանքում վայելու ճաշ պատրաստված էր հարիւրաւոր հիւրերի համար ճաշին ճառախօսեցին սրբ։ Սէրովքէ Եպիսկոպոսն, սրբ։ Եղիազար (որ Երևանից եկած էր նոյն օրն) և սրբ։ Մէրտիչ Արքեպիսկոպոսներն, Ճաշի ժամին նուագածուները կնուագէին և հրացանանաւորներն հրացաններ կարձակէին, Ճեմարանի մէջ ևս պատրաստված էր աշակերտների համար վայելու ճաշ, որ կվայելէին աշակերտներն ուրախ երգակցութեամբ, Ճեմարանումն ևս Ճաշի միջոցին Խորէն վարդ, Ստեփանէն, սրբ։ Անդրէաս Արքեպիսկոպոսի առաջարկութեամբ, Ճեմարանի յարատկութեան բաժակի վերայ քանի մի ջերմ խօսք ասաց, յիշեցնելով աշակերտներին Ա-եհափառ Կաթողիկոսի գործունէութեան գրլ-իւաւոր նպատակը, Ճեմարանի նշանակութիւնը մեր ազգի համար և աշա-կերտների պարտքերն առհասարակ, որից յետոյ աշակերտների կեցցէներ ի պատիւ Ա-եհափառ Կաթողիկոսի և Ճեմարանի կղղորդեցնէին ընդարձակ սե-ղանատունը։ Իսկ երեկոյեան վանքի մէջ երաժիշտների խումբը նուազներ կածէր և բազմաթիւ ժողովրդի առաջ հրախաղներն կկատարվէին մինչև 10 ժամ։ Այսպէս փառաւոր հանդիսակատարութեամբ վերջացաւ այս տա-րի մեր մեծագործ Հայրապետի Օծան տարեգարձը։ Ա. Էջմիածնի միաբա-նութեան տօնին ուրախակից գտնվեցան բազմաթիւ հեռաւոր հայրենասէր Հայեր, որոնք հեռագիրներով յայտնեցին գրեթէ ամեն քաղաքից իւրեանց ուրախակցութիւնը Ա-եհ։ Կաթողիկոսին։

Մայիսի 24ին ժամանեց Ա. Էջմիածին, հանքային ջրով բժշկվելու նպա-տակով արած երկար ճանապարհորդութենից յետոյ գէպի Կ. Պոլիս և Հայրենիքը, Սրբազան Ա-աշրամ Եպիսկոպոս Մանկունին։

Մայիսի 27ին Ա-եհափառ Կաթողիկոսը բարեհաճեց Հայաստանի եկեղե-ցու օրինադրված շքեղ և հոյակապ հանդիսակատարութեամբ Եպիսկոպո-սութեան բարձր աստիճանին արժանացնել Կեսարիայի առաջնորդ Եղիայ Ա-արդապետին, Զմիւռնայի առաջնորդ Մելքեսեղեկ Ա-արդապետ Մու-րադինին, Սեբաստիայի առաջնորդ Պետրոս Ա-արդապետին, Արաքերի ա-ռաջնորդ Եղնիկ Ա-արդապետ Ապահունուն և Ղարսի առաջնորդ Գրիգորիս Ա-արդապետ Աղուանեանին, իսկ Էջմիածնի միաբանութենից Գրիգոր վար-դապետ Տէր Մատթէոսեանին, Ներսէս վարդապետին և Գէորգ վարդապետ Արամելիքեանին։

Կրաքամազթենք նորապսակ Եպիսկոպոսներին, որպէս Եկեղեցու հրեշտակ-ներին, որ Առաքեալի խօսքի համեմատ Երիւ-Երկ Քոչեն իւրեանց անձներին և իւրեանց հօտերին։ Եպիսկոպոսի գլխաւոր գործունէութեանը

կվերաբերվին աղօթել, առնելով ուսուցանել, կառավարել և գատել,
Կրաքամաղթենք նորապսակ Եպիսկոպոսներին, ործնց Սուրբ Հոգին, Սուրբ
Հայրապետիս ձեռնազրութեամբ և աղօթքով, Տէրի արիւնով փրկված ժո-
ղովուրդն հովուելու տեսուչներ կարգեց, որ իւրեանց աղօթքը լինի միշտ
հզօր և մաքուր վարդապետութիւնն ճշմարիտ սրտաբուղին և անձին օրի-
նակով, կառավարութիւնն իմաստուն և բարեխնամ և գատաստանն
արգար և զմած:

Կրաքամաղթենք որ հաւատարիմ լինելով Հայաստանի Եկեղեցուն, Ա.
Էջմիածնի Մ. Աթոռիս և Հայրապետութեանը պատրաստ գոնին միշտ և
ամեն տեղ զնելու իւրեանց անձն իւրեանց հօտի վերայ, կրաքամաղթենք որ
աստուածային ողորմութիւնն առաջնորդէ և ուղեկցէ նորապսակ Սրբազն
Եպիսկոպոսներին իւրեանց կեանքի ամեն օրեր, Զօրութեան գաւազանը
թող շնորհէ նոցա Տէրը Սիօնից, որի նշանակ թող լինի Հայրապետից
յանձնված գաւազանը:

Եղանակ և դրույ հրցու դմ զնահնապատճեն կմարտնեն ցնառարմ դրան
և ուժագով կրթադիմաց լուս, շնորհ գույսանշու մաքրութար զնահնապատճեն
և հանգարի միջնորդութար կմարտնեն և հափերանիտ ուժուանդ. Ա հայու
ուժուանդ զնահնապատճեն դմ հրցու մակրութար շնորհ ուսուածար
մակրութար շնորհանու դուռ կրցեցուն ունեալար և դժուակ
և այս ուղարկու մատունարուածուական դրառուի սժրու. Ա նուն 01
ական համարակ Ա ցնառարմատ մանօ կամքազաւ նզարտն դմ հզ
մատմարք դրառու մինակազ մազմատք ընդավարդ մակրութար մակրութար
ունեալ շնորհար մաս մնալու միջնորդու, Խողմնիքառն զմուր ուժրակ
մատմար համար շնորհար միջնորդու, Համար ցնահնապատճենար

Համար համար զնահնապատճեն շնորհար մատմար մակրութար մակրութար և
ուսուածար պատճենադասական քոյնու և յնձ համերանիտ առ
ունեալ շնորհար համար զնահնապատճեն միջնորդու մեջակ մակրութար
ունեալ ուժուածար. Ա զնահնապատճեն կրցեցուն կրցեցուանդ. միջնորդաց
համար զնահնապատճեն ունեալ շնորհար ամրարդ. Ա համար զնահնապատճեն
ունեալ ուժուածար մակրութար մակրութար ամրարդ. Ա համար զնահնապատճեն
ունեալ ուժուածար մակրութար մակրութար ամրարդ. Ա համար զնահնապատճեն